

244. Յեօվանի կնիկ կառնը էդա բանիւր, մում կը վառի,
կգեայ Դաւթը յեօդէն:

Դաւիթն էլ դիւռ շնիր, քնիր ի.

Կնիկ կըսի.— Դաւիթ, էլը, դիւռ բւց:

Կըսի.— Դու վո՛ւ վո՛ւ իս, իս դիւռ բանամ:

Կըսի.— Քիւ խրեօխպօր Յեօվանի կնիկն իմ:

245. Դաւիթն ի, կըլնը դիւռ կը բանայ:

Կնիկն ի, կգեայ յեօդէն, կը նստի.

— Դաւիթ, կըսի, իս քի շիւտիւց չը տըսիր. քի կարօտով
էր, չըմ կարցիւր անիւռ անիւռ բան շնիր, հազը էդա ի, քիւ
խամար բերի:

Հենտե կը բանայ, դնը յեռջիւ Դաւթըն, կուժմ գինի, մէկ
կթղայ, էն էլ կը դնի յեռջիւ Դաւթըն:

246. Դաւիթ միտք կէնէր թէ—ըծը մէր չկայ, էս իմ մօր
տեղն ի, շատ միւնսթ կը բռնը.— Որ դիւ իմ մօր տեղն էր, յէս
օր ըծը ճանչցար, էկար իմ մօտ:

Էսաց.— Դաւիթ, խօրպան իմ քի. Սասնայ մէջ քիւ պէս՝
ոնչ իղիւր ի, ոնչ կըլնը էլ քիւ պէս աղայ:

447. Ապա Դաւիթ չըբ գնացիւր կուիւ, յեթիմ աղայ էր,
պախացող¹, ախանջ արող չկէր, մկայ որ գնաց կուիւ, էկաւ
լցուաւ: Դաւիթ սիօն ի եղիւր. մարդ կրիչկի, Դաւիթը կամչը-
նայ: Վուր էնու խօրոտ աչքիւր, կարմիր իրիսքիւր, խօրոտ քիթ
բերան:

248. Դաւիթն ի, զիւր խաց կուտի, նաւն գինին կը խմի:

Է՛, եօթ տարուան գինին, Դաւիթն էլ շամ կը խմի:

Կը խնդանայ, կըսի.— Իմ, յէս օր իմ խրեօխպօր կնիկ ը-
ծը իբրամ² ի էրիւր: Ա՛ղէկ մը խմի:

Դաւիթ կը սարխօշնայ³, գլեօխ կը դնը վար բարձին քնի.
էլ չկէրի վուր զրուցի:

249. Յեօվանի կնիկ գԴաւթը իրիսքիւր կը պագնը, ճակատ
կը պագնը. կրիչկի, Դաւիթ քնիր ի, ըսկի՛ խապար չի ուր մօտէն:

Կըլնը, կերթայ տուն, հալա Յեօվան քնուկ:

Էդա Յեօվանի կնիկ սուվրաւ:

Մէկ շաբաթ սկնայ գնաց, էկաւ.

էն մէկ օր միտք էրաց, էսաց.

— Իս էդա եօթ տարուան գինին վրէ՛ կը տանիմ.

Դաւիթ կը խմի, կը պառկի քնը.

1 Զգաստ, ուշիմ, ժուժկալ: 2 Թրք.— Լրաւէր, պատիւ կոչունը:

3 Թրք.— Լարբել: